



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2020 թվականի N 186-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 17-Ի N 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝
որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի ապրիլի 17-ի «Ս.
Հովհաննիսյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին» N 136-Ա որոշման 2-րդ կետը
շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կամ առաջարկված թեկնածուի
նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության
«Արուլյանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
պաշտոնակատար նշանակել *Արթուր Վալդդյաի Տաշյանին*»:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և
սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի
ենթակայության «Արուլյանի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային
կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան
արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2020 թվականի մայիսի 26
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

